Հայտարարություն

Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Քիմիա» առարկայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար.

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:

Հարցազրուցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

___ դիմում (ձև1),

___1լուսանկար 3x4 չափի,

___ բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

___անձը հաստատող փաստաթուղթ,

__«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

__ինքնակենսագրություն (ձև 5),

__այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

__հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

__ որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 18-ից մինչև դեկտեմբերի 1 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի դեկտեմբերի 2-ին՝ ժամը 14:00-ին Ամբերդի Հ.Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Ամբերդ բնակավայր, Հաղթանակի 28: Տեղեկությունների համար զանգահարել 095-15-08-09 հեռախոսահամարով, էլ.հասցե amberdh@mail.ru: